№ 69 ՇԱԲԱԹ ՅՈՒՆԻՍԻ 15 **1896** ՇԱԲԱԹ ՅՈՒՆԻՍԻ 15 № 69

ՔՍԱՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
Կամ Tiflis. Rédaction «Mschak».
ՏԵԼԵՖՈՆ № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
ՏԵԼԵՖՈՆ № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Նինա Իոսիֆովնա Նիկոլովա, Գէորգի Պավլովիչ Նիկոլով, Մարիա Բէժանովնա Դէմուրովա, Միխայիլ Բէժանովիչ Նիկոլով և Իւան Իոսեֆովիչ Ազիզով յայտնելով ազգականներին և ծանօթներին՝ առաջինը իր թանգագին ամուսնու, երկրորդը՝ հօր, երրորդը և չորրորդը՝ եղբօր և վերջինը՝ աներձագ

ՊԱՒԵԼ ԲԵԺԱՆՈՎԻՉ ՆԻԿՈԼՈՎԻ

մահը, խնդրում են շնորհ բերել յուղարկաւորութեանը Սաարօ-Կրէպօսանայեա փողոցի վրա գտնվող տանից, № 203, Մայդանի մօտ, Քաշվէթի ս. Գէորգ եկեղեցին, այս յունիսի 18-ին, առաւօտեան ժամի 10-ին: Հոգեհանդիսաը ամեն օր, երեկոյեան 7 ժամին:—Մարմինը հողին կը յանձնվի Պետրոպաւլովսկայա գերեզմանոցում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նոր Շահը և պարսկահայերը.—ՆԵՐԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Երևանից. Նամակ Գանձակից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղեկութիւններ. Ազէպի պայմանագիրը. Նամակ Թիւրքիայից. Նամակ Պարսկաստանից. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Թիւրքիայի ծովեզերքից.

ՆՈՐ ՇԱՀԸ ԵՒ ՊԱՐՍԿԱՀԱՅԵՐԸ

—

Պարսկաստանից ստացված տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ Պարսկաստանի նոր Շահը, գնահատելով երկրի հայ ազգաբնակութեան հաւատարմական եռանդը, մտադիր է աւելի լայնացնել հայ տարրի վայելած իրաւունքները և նուիրագործել այդ իրաւունքները որոշ օրէնքով և սահմանադրութեամբ:

Ինչպէս յայտնի է, Պարսկաստանում Նասրէդդին Շահի օրով, հայերը վայելում էին համեմատաբար աւելի ազատութիւն, քան միւս մահմեդական երկիրներում և հնարաւորութիւն ունէին խաղաղ կերպով առաջ տանել իրանց տնտեսական և կուլտուրական զարգացումը: Հայերը, նկատելով իբրև մի առանձին կրօնական համայնք, իրանց ներքին գործերի կառավարութեան վերաբերմամբ վայելում են տեղական ինքնավարութիւն, հայոց առաջնորդի իրաւասութեան տակ: Պարսից կառավարութիւնը գրեթէ պաշտօնապէս ընդունել է այդ ինքնավարութեան իրագործումը, քանի որ հայ համայնքների կառավարութիւնը՝ Պարսկաստանի երկու թեմերում ևս, թողել է հայ առաջնորդների տնօրէնութեան և կամքին: Եւ հայ առաջնորդները Պարսկաստանում լոկ կրօնական պետեր չեն նկատվում, այլ և ազգապետներ: Նրանք հանդիսանում են իբրև հայ ժողովրդի պաշտօնական ներկայացուցիչ և Էջմիածնի Կաթողիկոսի պատուիրակ: Հայ ժողովրդին վերաբերեալ ամեն հարցերում—հարկատուութեան, հարկահանութեան, զանազան վէճերի և խնդիրների վերաբերմամբ կառավարութիւնը դիմում է հայոց առաջնորդին: Առաջնորդները կարողանում են նոյն իսկ դատաստանական իրաւասութիւն գործ դնել հայ ժողովրդական մարմինների մէջ ծագած զանազան քաղաքացիական, ժառանգական և կալուածական վէճերի, ամուսնական և կտակի խնդիրների վերաբերմամբ: Հայերին թոյլատրվում է դիմել կամ շարիաթի օրէնքներին, կամ իրանց առաջնորդի իրաւասութեան, երբ վէճը, ի հարկէ, երկու հայի մէջ է:

Դժբաղդաբար, հայերը Պարսկաստանում անձեռնհաս են հանդիսացել և չեն կարողացել խելացի կերպով օգտվել այդ ներքին ինքնավարութեան բարիքներից, շնորհիւ իրանց ազգապետ-առաջնորդների կամ ագիտութեան կամ անսանձ կամայականութեան, մինչդեռ եւրոպական կաթոլիկ և բողոքական միսիոնարները աշխատել են ամեն կերպ օգուտ քաղել այդ իրաւունքներից. տեսնելով որ պարսից կառավարութիւնը դպրոցների և առհասարակ կրթութեան վերաբերմամբ խիստ ներողամիտ է և լայն ազատութիւն է տալիս, նրանք հիմնել են զանազան տեղերում քարոզչական միսիաներ, երկու սեռի դպրոցներ, որբանոցներ, հիւանդանոցներ և այլն: Հայոց առաջնորդները շատ քիչ հոգս են տարել այդ տեսակ հաստատութիւններ հիմնելու մասին. ինչ վերաբերում է իրանց տրված տեղական ինքնավարութեան գործադրութեան, նրանք այդ կատարել են մինչև այժմ և կատարում են առանց սիստէմի, առանց ուղղութեան, առանց ժողովրդի անմիջական մասնակցութեան և ղեկավարվել են լոկ իրանց ցանկութիւններով և կամայականութիւնով, այն զանազանութեամբ միայն, որ ժողովրդասէր առաջնորդները ունեցել են մի օժանդակ — խորհրդակցական ժողով, բաղկացած հայ ազաներից և խաներից, որոնք և նկատվել են իբրև Պարսկաստանի հայ ժողովրդի ներկայացուցիչներ:

Հասկանալի է, որ վայելած իրաւունքների գործադրութիւնը, տեղական ինքնավարութեան իրականացումը կարելի է աւելի հաստատ, խելացի և նպատակայարմար հիմունքների վրա դնել, քան եղել է մինչև այժմ: Պարսկաստանի երկու թեմերի առաջնորդները պէտք է աշխատեն, որ շահերի տուած իրաւունքից օգտվի Պարսկաստանի ամբողջ հայ ժողովուրդը, այնպէս, որ ազգային և ժողովրդական գործերի մատակարարութեան և կառավարութեան խնդիրներում ուղղակի մասնակցութիւն ունենայ ինքն ժողովուրդը, յանձին իր ներկայացուցիչների և ոչ թէ բոլոր գործերի ղեկը դնվի միայն աղաների և խաների ձեռքում, ինչպէս եղել է մինչև այժմ: Թեմերի մասերը—Աշմաստ, Խոյ, Ղարադաղ, Ուրմի, Քիւրդստան (Ատրպատականի թեմը) և Թէհրան, Ղազվին, Բաշտ, Զանջան, Լօրստան (Նոր-Զուղայի թեմը) կարող են ներկայացուցիչներ ուղարկել Թավրէզ և Սպահան՝ մասնակցելու ազգային ընդհանուր ժողովներին, որոնք կարող են գումարվել պարբերաբար տարին մի կամ երկու անգամ առաջնորդի նախագահութեամբ և տնօրինել տեղական ժողովրդական բոլոր գործերը, հիմնել դպրոցներ, զանազան հաստատութիւններ և այլն:

Եւ քանի որ ինքն նոր Շահը տրամադիր է և ցանկութիւն ունի, որ իր հաւատարիմ հայ ժողովուրդը անխափան առաջադիմէ խաղաղ, կուլտուրական զարգացման ասպարիզում, քանի որ նա մտադիր է աւելի ընդարձակել նրա իրաւունքները և արտօնութիւնները ներքին կառավարութեան գործերում,—պէտք է շտապել օգուտ քաղել այդ բարի տրամադրութիւնից, պէտք է աշխատել իրաւունքները վերածել մի հաստատ, որոշ օրէնքի և գործել այդ որոշ օրէնքի ղեկավարութեամբ: Մենք համոզված ենք, որ նոր Շահը ուրախութեամբ կը հաստատի այդպիսի մի կանոնադրութիւն:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԹԻՒՐՔԻԱՅԻ ԾՈՎԵԶԵՐԲԻՑ

XV

Նոր-Թիւրքերը

—

Թիւրքիայի տնտեսական և վարչական վիճակով զբաղվողների համար վերջին ժամանակներս ամենից շատ ուշադրութիւն գրաւող խնդիրներից մէկն էլ նոր-Թիւրքերի կուսակցութիւնը և նրանց առած սպառնական դիրքն է: Որքան Թիւրքիայի տնտեսական և վարչական կացութիւնը վատթարանում է, այնքան էլ երիտասարդ-Թիւրքերն աւելի վստահութեամբ և աւել բարձր են ձայն բարձրացնում, և որքան նրանք հաղածվում են երկրի ներսերում և Կ. Պոլսում, այնքան էլ աւելի են տարածվում և զօրանում թէ արտասահմանում և թէ նոյն իսկ Կ. Պոլսում: Վերջին երկու տարվայ մէջ նրանց դիրքը և թիւը արագաբար է աճում, որովհետև Թիւրքական ըէժիմից բոլոր դժգոհութիւն ունեցողները—որոնց թիւը լեգէօն է,—սրտով ու մտքով յարած են նրանց, թէև ոչ մի իրական գործակցութիւն էլ ցոյց չը տան:

Նոր կամ երիտասարդ-Թիւրքերը, չը նայելով յաների կարծիքին, ընդդէմ են բռնի միջոցներին. նրանք ուզում են, գոնէ որքան ինձ վստահացրել են Կ. Պոլսում, միայն բարոյապէս ազդել թէ սուլթանի կառավարութեան և թէ մանաւանդ Թիւրք ժողովրդի վրա, և յոյս ունեն թէ խաղաղ յեղափոխութեամբ հնարաւոր կը լինի ձեռք բերել այն լաւագոյն վիճակը, որին ձգտում են նրանք: Այս նպատակով էլ, զանազան ժամանակ, պարբերական թերթերով և այլ մանաւոր գրուածքներով, աշխատում են պարզել իրանց գաղափարները և երևան հանել սիրող ըէժիմի բովանդակ ապօրինութիւնն ու վատնգը: Այսպիսի գրուածքների կարգում են, ի միջի այլոց՝ «Lettres ouvertes à sa majesté Impériale le Sultan Abdulhamid», «La Turquie sous Abdulhamid», «Comment on ruine un Empire», «La Turquie libre» և այլն, որոնք թէ ֆրանսերէն և թէ Թիւրքերէն լեզուներով են հրատարակված, մի մասը Լօնդօնում, Պարիզում և միւսը՝ նոյն իսկ Կ. Պոլսում: Բայց նրանք, այժմ, Թուրքերէն լեզուով և կանոնաւորապէս հրատարակվող 3 յատուկ օրգան էլ ունեն, որքան ինձ յայտնի է: 1) «Հիւրրիյէթ» (Ազատութիւն) Լօնդօնում, խմբագիր-հրատարակիչ Զիվանփիր. 2) «Մէշվէրէթ» (Խորհրդակցութիւն) Պարիզում, խմբագիր-հրատարակիչ Ալի Բիզա, և 3) «Միյզան» (Կշիռ) Եգիպտոսում, խմբագիր-հրատարակիչ Մուրադ բէյ: Սրանցից՝ «Միյզանը» կանխապէս հրատարակվում էր Կ. Պոլսում—անշուշտ ոչ իբրև յեղափոխական, այլ իբրև գրական պարբերական թերթ և միշտ հաճութեամբ կարդացվում: Մուրադ բէյի յօդուածները, որքան ես ինքս էլ նկատել եմ, միշտ աւելի կենդանութիւն էին պարունակում, քան որ և է միւս Թիւրք գրողներինը:

Այս բոլոր օրգանների մէջ ամենախիստ յարձակումներ են լինում ոչ միայն ներկայ վարչական ըէժիմի, այլ և նոյն իսկ սուլթանի անձի դէմ, ուստի օսմանեան վեհապետը ամեն հնար գործ է դնում, որ կարողանայ խափանել տալ այդ թերթերի հրատարակութիւնը, բայց չէ աջողում:

Արդէն յայտնի է «Մշակի» ընթերցողներին, թէ ինչպիսի անաջողութեան մատնվեց Թիւրք կառավարութեան միջնորդութիւնը՝ Ալի Բիզա բէյը Պարիզից և Մուրադ-բէյը Եգիպտոսից արտաքսել տալու մասին: Նոյնպիսի միջոց գործ է դրված նաև երրորդ խմբագրի՝ Զիվանփիրի դէմ: Թիւրք կառավարութիւնը չատ լաւ գիտնալով, որ ազատ Անգլիայում նա հնարաւորութիւն չունի ոչ Զիվանփիրը արտաքսել և ոչ էլ նրա երկշաբաթաթերթը (Հիւրրիյէթ) խափանել տալ, և թէ միմիայն դատարանի միջոցով կարելի կը լինի նրանց դէմ որ և է պատժական վճիռ ձեռք բերել, հրահանգ էր տուել Կոստանդի փաշային (Լօնդօնի դեսպանին) դիմել դատարանին, բայց դեսպանը երևի կանխապէս խորհրդակցելով իր փաստաբանի հետ, անպատեհ էր համարել, որովհետև տարակոյս չը կար, որ անգլիական դատաւորը ոչ մի ակնածանք պիտի չունենար, այլ գործը պիտի վճռէր՝ միայն օրէնքի հիման վրա, իսկ այդպիսի վճիռը ձեռնտու չէր լինի սուլթանին...

Բէյհիկթաշի և Օրթաքէօյի բարձունքի վրա բնակող միապետը հարկաւ չափազանց զայրանում է, որ ինքը ստիպված է պարզ հանդիսատես լինել, թէ ինչպէս այդ թերթերն անարգել և կատաղօրէն յարձակվում են նրա և նրա կառավարութեան վրա և աշխատում են գրգռել նրա դէմ՝ թէ Թիւրքիայում և թէ Թիւրքիայից դուրս ապրող մահմեդականներին և այս կերպով մի մեծ վիհ են բացանում իմամէթի-Մուհամմէդի (Մուհամմէդի հօտի) և իր խալիֆայի մէջ: Թէ Եըլդըզում և թէ Բաբը-Ալիում երևի շատ լաւ գիտեն, որ վերոյիշեալ թերթերն ահագին թւով ձրի ուղարկվում են ամեն կողմ, բոլոր օսմանեան ներքին և արտաքին պաշտօնեաներին, Թիւրք դեսպանատներին, հիւպատոսարաններին, մօլլաներին, գրագէտներին, ուսուցիչներին, նոյն իսկ բանակի սպաներին և Կ. Պոլսում ապրող փոքր ի շատէ յայտնի օտարականներին: Տարակոյս չը կայ, որ այդ թերթերը ստացվում են նաև պալատում և սուլթանը հարկաւ երբեմն ինքն էլ է կարդում, թէև ապարդիւն... Դրա փոխարէն, երբ հնար չեղաւ օտար հողի վրա կուսակցութեան պարագլուխներին վնասել ոչ խոստումներով, ոչ բռնութեամբ և ոչ էլ կաշառքով,—այն ժամանակ ասպարէզ հանվեց չար ոգին, տխրահռչակ Նազըմ փաշան, որ մի խիստ հալածանք հանեց՝ իբրև նոր-Թիւրք կասկածելի դարձած կամ այնպէս համարվող բոլոր դըժգոհների դէմ, և այսպիսիները խմբովին ըսկսան ձերբակալվել: Այժմ ուշադրութիւնը դարձված է յատկապէս պետական բարձր պաշտօնեաներից կասկածելիների վրա: Երկու երիտասարդ պաշտօնեայ՝ սուլթանի անձնական գանձի մինիստրութեան,—աքսորվեցան Մեքքէ: Բ. Դրան Սիջիլլի-Ահվալ կոչված բաժնի վեց պաշտօնեայ նոյնպէս ձերբակալվեցան և ոչ ոք չը գիտէ թէ ինչ վախճան են ունեցած: Նոյն իսկ Հարբունի դիւանի կարևոր գործերի սենեակի (դիվանը—հիմաեուն միւհիմմէ օդասը) պաշտօնեաներից յանկարծակի բռնված և աքսորվածներ կան: Սրանք՝ փոքր ի շատէ յայտնի եղածներն են, շնորհիւ իրանց պաշտօնական դիրքի, իսկ թէ դժոխային խաւարի մէջ ինչեր են կատարվում, այդ միայն՝ Եըլդըզի բանտի խոնաւ պատերը, Բոսֆորի ձկները և մանաւանդ արքունի լրտեսների վիթխարի բանակի գլխաւորները գիտեն: Այս բռնական ճանապարհի հետ զուգընթացաբար՝ դատական կատակերգութիւններ էլ են կատարվում երբեմն, pour sauver les apparences, և միանգամայն՝ ջանալով մամուլի միջոցով էլ ազդել Թիւրք հասարակութեան

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

—

Յունիսի 10-ին

Յունիսի 8-ին, շաբաթ օր, Վեհափառ Կաթողիկոսը, ինչպէս արդէն ձեզ հաղորդված է, եկաւ Երեւան և իջանեց առաջնորդարանում։ Երեկոյեան ժամերգութիւնից յետոյ, մի քանի խօսք խօսեց, մօտաւորապէս հետեւեալը. «Մենք դրացիներ ենք, պիտի շուտ շուտ տեսնվենք միմեանց հետ, սակայն ես եմ, որ ամենից շատ այցելութիւն եմ գալիս ձեզ. իմ նոր եկած ժամանակ, շատերն էին գալիս այցելութեան և ընդառաջ, իսկ փոքր առ փոքր այցելուների և ընդառաջ դուրս եկողների թիւը քչանում է»։— Յաջորդ օրը, կիրակի, Պողոս-Պետրոս եկեղեցում խոնված էր երկու սեռի բազմութիւնը և սպասում էր Վեհափառի քարոզին։ Պատարագը վերջացաւ, Վեհափառը բարձրացաւ սեղան և երկար խօսեց։ Ծերունի Հայրապետի ձայնը առաջվան պէս խրոխտ չէ լսվում։ Վեհափառը խօսեց թիւրքաց հայերի թշուառ դրութեան մասին, և աւելացրեց. «Ադ ալ կանցնի, պէտք չէ յուսահատվել, աղօթենք Աստուծուն»։ Պատարագից յետոյ Վեհափառը այցելութեան գնաց Նահանգապետին։ Առաջնորդարանում ճաշ էր պատրաստված մօտ 40 անձանց համար։ Այսօր, յունիսի 10-ին, առաւօտեան ժամը 8½-ից անց Կաթողիկոսը ճանապարհ ընկաւ դէպի Սեան։

Այս տարի Երևանի գիմնազիան աւարտեցին 14 հոգի, որանցից 5 հոգի հայեր են. մի հայ, Նաղարեանց անունով, ոսկէ մեդալ է ստացել, իսկ 2 ռուս՝ արծաթէ մեդալ։ Լսում ենք, որ Նաղարեանցի մասին մեծ հրճուանքով է խօսում գիմնազիայի վարչութիւնը։

Ե.

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

—

Յունիսի 6-ին

Այստեղ ներկայացումներ տալու համար Թիֆլիսից եկան դերասաններ Վրոյր և Օհանեան և պօլսեցի Ֆելէկեան դերասանուհիները—օր.օր. Վարդիթեր և Մարի-Հրանոյշ։ Ներկայացումը պիտի տեղի ունենար կիրակի, մայիսի 26-ին։ Աֆիշների վրա, ի միջի այլոց, տպված էր հետեւեալը. «Վարագոյրը պէտք է բարձրանայ ճիշդ 8½ ժամին, ուստի խնդրահարար խնդրվում է, որ ցանկացողները ճիշդ որոշեալ ժամին ներկայ գտնվեն։» Հասաւ ներկայացման գիշերը, բայց ինչ։ Մեր դերասանները սպասելով մինչև որոշեալ ժամանակը, տեսան որ և ոչ մէկը չէ բարեհաճել գալ թատրոն։ Ժամը 9½-էր, իսկ կլուբի դահլիճում, որտեղ պէտք է տրվեր «Ղարաբաղի աստղագէտը», հազիւ 20 հոգի կար. ծախսը 70 ռուբլի էր, մինչդեռ մուտքը ծախսի ⅓ մասը հազիւ էր ծածկում։

Ժամը մօտ 10-ն էր, բայց դեռ վարագոյրը չէր բարձրացել. ներկայ եղողները աղաղակում են «ժամանակ է», և ահա լսում ենք դերասաններից, թէ ներկայացումը յետաձգվում է չորեքշաբթի օրը, մայիսի 29-ին։ Հանդիսականների հարցին, թէ ինչ պատճառով է յետաձգվում, պատասխանում են սովորական դարձած «մեղանից անկախ պատճառներով»։ Ժողովուրդը վերադառնում է տուն։

Յուսահատ դերասանները սպասում էին չորեքշաբթի երեկոյեան, և յոյս ունէին, որ մինչև այդ օրը տօմսակները կը ծախվեն։ Եւ իրաւ, այս անգամ գոնէ դրանց յոյսը արդարացաւ։ Մուտքը այնքան էր, որ ծածկում էր ծախսը...

Մենք այդքան երկար կանգ առանք այդ մանրամասնութիւնների վրա՝ մի գաղափար տալու համար, թէ մեր քաղաքում ինչպէս են կազմվում ներկայացումները։ Գալով խաղին՝ պէտք է ասենք, որ խաղը լաւ անցաւ. երկրորդական դերերը ստանձնել էին սիրողները, որոնք չը փչացրին։ Դերասանները մտադիր են երկրորդ ներկայացում ևս տալ։

Վ.Կ.

ՆԱՄԱԿ ԹՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Շուշի, մայիսի 30-ին

Կարդալով «Մշակի» № 57-ի մէջ Խանքենդից գրած Ս. Ալլահվերդիբէկեանի նամակը, խնդրում եմ տպագրել հետեւեալ հերքումը։—Նախ՝ պարոնի ծննդական վկայականի քննութեան վերջնական արդիւնքը (Ջաբրայելի գաւառապետի գրութիւնը) մտել է կօնսիստորիա ոչ թէ յունվարին, այլ մարտի 18-ին (№ 497, «մտից մատեան»)։ Երկրորդ՝ մարտի 18-ից սկսվելով Զատկական տօները՝ անհնար էր այդ օրերը տալ նրան ծննդական վկայականը։ Երրորդ՝ Զատկական տօներից անմիջապէս յետոյ պատրաստելով նրա վկայականը, արդէն դուրս եկած էր ապրիլի 3-ի օրագրով։ Չորրորդ՝ պարոնը այդ օրից սկսած մինչև այսօր գէթ մի անգամ նեղութիւն չէ կրել կօնսիստորիա մտնել և իր արդէն պատրաստ և գործի մէջ ընկած վկայականն ստանալ։ Եւ հինգերորդ՝ կօնսիստորիայի ոչ մի ծառայող նրան չէ վիրաւորել և վիրաւորելու ոչ մի տեղիք չէ եղել, որպէս զի դժուար լինէր պարոնին երկրորդ անգամ այդ ծառայողներին դիմելու։ Ցոյս ունենալով, որ այդ փաստերից յետոյ պարոնը յետ կը վերցնի իր մեղադրանքը, առիթ եմ համարում աւելացնել, որ ոչ թէ միայն Ալլահվերդիբէկեանի ծննդական վկայականը, այլ այդպիսի մի քանի տասնեակ վկայականներ պատրաստ ընկած են կօնսիստորիայում և նրանց տէրերը (խօսքը տեղացիների և գիւղացիների մասին է, որոնց կօնսիստորիան պարտական չէ ուղարկել), չեն գալիս ստանալու, մինչդեռ իրանց սեպուհ պարտականութիւնն է ստորագրել մատեանում և ստանալ։

Ատենադպիր կօնսիստորիայի՝ Ս. Լազարեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Կովկասի կառավարչապետ գեներալ-ադիւտանտ Շերէմէտեվի, Մոսկվայից, յունիսի 5-ին արձակած մի հրամանից երևում է, որ բարձրագոյն հրամայված է երկրի ժամանակաւոր կառավարութիւնը և զօրքերի հրամանատարութիւնը, կառավարչապետի օգնականի բացակայութեան ժամանակ, յանձնել կովկասեան կօրպուսի հրամանատար իշխան Ամիլախվարիին, որը այսօր, յունիսի 15-ին պէտք է վերադառնայ Մոսկվայից Թիֆլիս։

—

Մի անստորագիր պարոն, «Кавказъ» լրագրի երէկվայ համարում պատմում է իր խօսակցութիւնը Իզզէտ փաշայի հետ, որ նորերս գնացել է Թէհրան իբրև սուլթանի ներկայացուցիչ, և այս օրերս վերադարձաւ Կ. Պոլիս։ «Գեղեցկադէմ, ինտելիգէնտ դէմքով» փաշան, որ մաքուր ֆրանսերէն է խօսում, նկարագրեց Պարսկաստանը ամենալատ գոյներով, իբր մի երկիր, ուր չը կայ կարգ, կանոն, արդարութիւն, զօրք, ճանապարհ, առևտուր։ Իսկ Թիւրքիան. ոհ, Թիւրքիան՝ Իզզէտ փաշայի նկարագրութեան մէջ հանդէս է գալիս իբր մի դրախտ, իբր մի օրինակելի պետութիւն, ուր չնորհիւ սուլթանի ծաղկում է արդարութիւն, կուլտուրան, առևտուրը, արդիւնաբերութիւնը, զօրքը... Իսկ հայոց հարցը, հայկական կոտորածները, Կրէտէի ապստամբութիւնը,—այդ բոլորը «ինտելիգէնտ» փաշայի կարծիքով օտար պետութիւնների ինտրիգների արդիւնք է, հետևանք չարամիտ գրգռումների։ Սուլթանի «կրթված» ներկայացուցիչը իր ճառը վերջացրեց խորը ցաւ յայտնելով, որ իր պաշտօնը՝ տիրելով Փոքր-Ասիային, մեծ սիրալ գործեցին նրանով, որ իսկոյն մահմեդական չը դարձրին բոլոր քրիստոնեաներին, քանի որ այդպէս վարվելով այսօր չէր լինի ոչ հայոց հարց, ոչ Կրէտէի հարց, և ոչ էլ որ և է «հարց»... Ռուս լրագրի աշխատակիցը հաղորդում է այդ բոլորը առանց իր կողմից մի խօսք անգամ աւելացնելու։ Այդ լռութեան մէջ թաղված է մի պերճախօս հերքում...։

—

Լսում ենք, որ Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը իր վերջին նիստում որոշեց դպրոցի ուսուցչական խումբը անփոփոխ պահել և առաջիկայ 1896/97 ուսումնական տարին։

—

Հրատարակվել են նոր կանոններ առևտրական ուսումնարանների մասին։ Այդ ուսումնարանները պէտք է պահպանվեն հասարակական հաշուով։ Ծրագրի և աւանդելի առարկաների վերաբերմամբ նրանք պէտք է բաժանվեն չորս կարգի—առևտրական դասարաններ, առևտրական դպրոցներ, առևտրական ուսումնարաններ և առևտրական գիտութիւնների կուրսեր։ Բոլոր դպրոցները պէտք է կառավարվեն վաճառական դասակարգի կողմից ընտրված ներկայացուցիչների առանձին խորհրդի ձեռքով։ Առևտրական դասարանները իրաւունք ունեն մտնել ամեն հասակի և մինչև անգամ անգրագէտ անձինք։ Թոյլ է տրվում հիմնել առևտրական գիտութիւնների կուրսեր կանանց համար։

—

Լսում ենք, որ Ներսիսեան դպրոցի եօթանասուն և հինգամեակի պատմութիւնը, որ կազմել է Ա. Երիցեանը, յանձնված է տպագրութեան։ Ամբողջ հրատարակութիւնը, որ բաղկացած կը լինի երկու մեծ հատորից, պատրաստ կը լինի մինչև յունվար ամիսը։

—

Մեզ հաղորդում են, որ մի քանի ինտրիգաններ այժմ զբաղված են արհեստաւորների մէջ ստորագրութիւններ ժողովելով, որպէս զի բողոք ներկայացնեն Թիֆլիսի Նահանգապետին և այդպիսով խանգարեն արհեստաւորների նորընտիր գլխաւորի հաստատութիւնը։ Այդ այն մարդիկն են, որոնք սնացան ընտրութիւնների ժամանակ։ Նրանք ամեն տեսակ միջոցների են դիմում և յոյս էլ ունեն իրանց աջողութեան վրա։

—

Հարաւային Ռուսաստանում հացի գինը ընկել է։ Այդ հանգամանքը սկսել է ազդել և Անդրկովկասի հացի առևտրի վրա։ Խարկովի վաճառանոցում հաճարի գինը ընկել է մինչև 25 կոպէկ պուդը, և դեռ գնողներ չեն գտնվում։

վրա, «Սաբահ» և «Իկդամ» լրագիրների մէջ պարագային յարմար ներշնչված յօդուածներ են երևում Մուրադ-բէյի և միւսների դէմ։

Այս բոլոր թշնամական ցոյցերի և պատիժների դէմ հակառակորդ կողմն էլ հանդարտ չէ մընում։ Այժմ նոր-թիւրքերը կազմել են մի կենտրօնական յանձնաժողով՝ Օսմանլը իթթիհատ քօմիտէսի (օսմանեան միութեան յանձնաժողով) անունով, որ բացի վերոյիշեալ պարբերական թերթերից առանձին հրատարակութիւններով էլ է պատասխանում թիւրք կառավարութեան յանձնարարութեամբ գրված յօդուածներին։ Այսպիսի մի հրատարակութիւն է լոյս տեսել մօտերս՝ կարծեմ Լօնդոնում, «ՄաՀքէմէի-Բիւրքի» (բարձրագոյն դատարան) վերնագրով, բայց բովանդակութիւնը յայտնի չէ ինձ։

Այս բոլորը սատիկ յուզմունք և վրդովմունք է պատճառում օսմանեան կառավարութեան, նաև այն պատճառով, որ երկիւղ է զգացվում թէ թրքահպատակ արաբ չէյխերը՝ այդ հրատարակութիւնների և այլ բերանացի քարոզների ազդեցութեան տակ վաղ թէ ուշ կենթարկվեն մի կողմից դրանց և միւս կողմից անգլիական ազդեցութեան։ Մանաւանդ որ այս չէյխերը՝ իբրև արաբական զանազան ցեղերի գլխաւորներ, մինչև հիմա կլորիկ թոշակներ էին ստանում օսմանեան գանձարանից, չնորհիւ վեհ. սուլթանի, իսկ այժմ, Թիւրքիայի ֆինանսների այս ամենանեղ վիճակում մի սև փող էլ չեն կարողանում ձեռք բերել գանձարանից, որ մեծ դժգոհութեան և գրգռութեան առիթ է նրանց։ Մեծապէս կարևոր խնդիր է, որ եթէ «սուրբ քաղաքների» (Մէքքէ և Մէդինէ) արաբները՝ իրանց Շերիֆով (էմիր) և ցեղապետներով՝ հերձուած կազմեն և չը կամենան ճանաչել օսմանեան սուլթանի խալիֆայութիւնը, այս կերպով սուլթանը ոչ թէ միայն իր բարոյական հեղինակութիւնը կը կորցնի, այլ նրա վեհապետական իրաւունքն էլ ինքն ըստ ինքեան կը դադրի Արաբիայի վրա։ Երիտասարդ թիւրքերը, որքան լսել եմ, այս խնդրի մէջ կատարելապէս համաձայն չեն։ Օրինակի համար Լօնդոնի «Հիւրրիյէթը» օսմանեան սուլթանների խալիֆայութեան կողմն է, յոյս տածելով, որ երբ Էմիր-Հաջ (Աստուծոյ կամք) կատարվի և գահաժառանգ Բէդրէդդին յաջորդէ Համիդ II-ին, նոր սուլթանը կը յաջողի՝ առանց օտար միջամտութեան դիմելու բարեկարգել երկիրը՝ ազատելով այժմեան սոսկալի վիճակից։ Իսկ միւս թերթերը պնդում են թէ հարկաւոր է Մէքքէյում վերականգնել արաբական խալիֆայութիւնը։ Այս նպատակի համար նրանք ըստ երևոյթին յոյս են դնում Մեծն Բրիտանիայի՝ իբրև աշխարհիս մեծագոյն մահմեդական պետութեան վրա, որի միւսլիման հպատակները 2 անգամ աւելի են թուով, քան սուլթանի «ստանարհ դերիները» (ինչպէս սովորութիւն է եղած անուանել՝ թիւրքաց ընտանեկան և նաև գրական լեզուի մէջ, սուլթանի հպատակներին)... Նրանց վրա այն է ազդում մանաւանդ՝ որ ուրիշ մահմեդական իշխաններ ևս՝ ինչպէս Մասկատի (Արաբիայում) էմիրը, Զանզիբարի հէքիմը և այլն արդէն բոլորովին բրիտանական ազդեցութիւն են կրում։ Միւս կողմից մի անգլիական պատերազմական նաւ էլ շարունակ խարիսխ է գցած Մէքքէյի նաւահանգստում, Ջիդդէյում։

Նոր-թիւրքերից մէկը, որ Գալաթա-Սէրայի (Պօլսում) լիսէումն էր աւարտած իր ուսումը, մի անգամ կատաղութեան ասիճան հասած, խիստ կերպով արտնջում էր իմ առջև, թէ Թիւրքիայի բուն տէրը, թիւրք ժողովուրդը՝ 700 տարուց ի վեր ամենայն հաւատարմութեամբ ծառայել է իր երկրին և սուլթանին, և ոչ մի քաղաքական արտօնութիւն կամ այլ առանձին իրաւունք չէ չնորհված նրան, իսկ մակեդոնացիները և յատկապէս այնտեղի բուլգարները, որոնք գոնէ հայոց նման տասնեակ հազարներով կեանք չեն զոհած և միլիոնաւոր ոսկիի կողոպուտի չեն ենթարկված, այսօր, չնորհիւ օտար ազդեցիկ միջնորդութեան, կարողացան ձեռք բերել մի շարք բարեկարգութիւններ։ Ես սկսեցի մխիթարել իմ խօսակից և աղատամիտ ձևացող թիւրք հայրենասէրին, թէ նա հիմա չունի այդպէս նեղանալու, քանի որ ծրագրելու, խոստանալու և գործադրելու մէջ անգին անջրպետ կայ և սուլթանը երբէք չի համաձայնվի անցնելու այդ անջրպետը, գոնէ իր աղատ կամքով. հետևապէս մակեդոնական բէֆորմներն էլ կը մնան մեռած տառ։

—Բայց ինչ է ձեր պահանջը, ձեր ծրագիրը, հարցրի ես։

—Մեր ծրագիրը, պատասխանեց նոր-թիւրքը, այն է, ինչ որ սուլթան Համիդ ինքն է հանդիսաւորապէս խոստացել կատարել 1876-ին, գահ բարձրացած ժամանակ։ Այս խոստումը առաջ է բերված նրա՝ Միդհաթ փաշային ուղղած խաթթը Հիմայունի մէջ (17/29 դեկտեմբերի, 1876 թ.), երբ երիտասարդ-թիւրք կուսակցութեան այդ հզօր պարագլուխը սադրագամ էր։

Այդ ծրագիրը շատ դեղեցիկ մաքեր և առաջադրութիւններ էր պարունակում, որոնք օսմանեան օրէնքների մէջ երբէք պակաս չեն եղել։ Օրինակի համար ծրագրի 5-դ յօդուածով սուլթան Համիդ խոստանում էր՝ «Արգելել ամեն տեսակ սխալներ և զեղծմունք, որոնք հետևանք են ապօրինի գործերի, այսինքն մի կամ մի քանի անձերի կամայական տիրապետութեան, չնորհել մի և նոյն իրաւունքները, և տալ մի և նոյն պարտականութիւնները բոլոր այն հասարակութիւնների անդամներին, որոնցից բաղկացած է օսմանեան ընկերութիւնը, որպէս զի բոլորն էլ առանց որ և է խորութեան օգտվեն ազատութեան, հաւասարութեան և արդարութեան բարիքներից և այլն»։ Սրանք այնպիսի խօսքեր և խոստումներ են, որոնք Համիդ II-ից կէս դար առաջ յայտնած և շատ աւելի անկեղծ ու հաստատուն կերպով է արտասանած սուլթան Մահմուդ, իսկ թէ այս վերջին 20 տարվայ մէջ, 1876-ից մինչև հիմա, ինչպէս են բաշխված եղել Թիւրքիայում ազատութեան, հաւասարութեան և արդարութեան բարիքները, այդ շատ լաւ կարելի է հասկանալ Թիւրքիայի այժմեան վիճակից... Խօսքերին գործ է պէտք, և խոստումներին՝ կատարում, եթէ ոչ գեղեցիկ խօսքեր բառարաններում և բանաստեղծութիւններում աւելի շատ կան...

Սակայն երիտասարդ թիւրք հայրենասէրների ձգտումը և բովանդակ ջանքը օսմանեան սահմանադրութեան վերահաստատումն է, որը կարող է միայն՝ իբրև վերանկիչ այժ և միջոց, բարեքել այս անկեալ դրութիւնը։

Ուստի յետագայ յօդուածիս մէջ կը ջանամ պարզել, թէ ինչ բան էր օսմանեան սահմանադրութիւնը, ինչ պարագաների մէջ էր ծնունդ առել և ինչպէս է խափանված։

Ակնատես

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Յունիսի 13-ից, Ռուսաց գործակալութիւնը Կ. Պոլսից մեզ հեռագրում է. «Յունիսի 11-ին Վանում նոր խառնակութիւններ տեղի ունեցան, որոնց ժամանակ կոտորվեցին բազմաթիւ հայեր: Հայերից շատերը թաքնվեցին անգլիական հիւպատոսարանում: Կարգը վերականգնված է: Կոտորվածների ընդհանուր թիւը հաշուում են 400 հոգի:»

—

Կ. Պոլսից, յունիսի 13-ից, Ռուսաց գործակալութիւնը մեզ հեռագրում է. «Վանում երէկ տեղի ունեցած խառնակութիւնների ժամանակ իշխանութիւնները դիմեցին անգլիական և ռուսաց հիւպատոսներին՝ միջամտութիւն խնդրելով նրանցից, որը աջողութեամբ պսակվեց: 500 մարդիկ, որոնք յունիսի 8-ի գիշերը հեռացել էին Վանից, ետ թարկվեցին քիւրդերի յարձակմանը և ցրվեցին: Թոքաթում և Նիքսարում նոյնպէս խառնակութիւններ տեղի ունեցան, բայց աջողվեց շուտով վերջ տալ դրանց: Բ. Դուռը անկեղծ աշխատում է խափանել շարժումը:»

—

Կ. Պոլսից, մեր թղթակցից ստացանք հետեւեալ տեղեկութիւնը, յունիսի 7-ից. «Երէկ Պոլսոյ եւրոպական դեսպանատունները հասած հեռագիրներու համաձայն, զարհուրելի ջարդ մը տեղի ունեցած է Վան. ջարդը սկսած է յունիս 3-ի առաւոտն և վերջացած է հետեւեալ օրը, իրիկուան դէմ: Զոհերուն թիւը ահագին է: Մանրամասնութիւնները հասած չեն դեռ»:

—

Կ. Պոլսից, յունիսի 4-ից, Էմիրնէի վրայով, հեռագրում են. «Բ. Դրան հրամանով, չաբաթ օր, յունիսի 1-ին, երեք մարդիկ հրացանի բռնուեցան: Կարծում են, որ դրանք ցոյց անողներ են: Երկուշաբթի, յունիսի 3-ին, չորս հայեր, որոնք մասնակցել են յեղափոխական շարժումներին, հրապարակների վրա պէտք է կախաղան բարձրացնվեն»

—

Կ. Պոլսից գրում են «Одесскій Листокъ» լրագրին. «Բաղաքի զանազան տեղերում, յունիսի 3/15-ին, վաղ առաւօտեան, կախաղան բարձրացրին մօտ տասը հայ հնչակեաններ, որոնք վերջին ժամանակ ոստիկանների և ժանդարմների հետ կռիւ մղելով՝ սպանել էին դրանցից մի քանի հոգի: Գարաքէօյի նոր կամուրջի մօտ կախ տուած երկու երիտասարդներին, Լեոն և Կարօ անուններով, թողեցին կախաղանի վրա ամբողջ մի քանի ժամ, որպէս զի սարսափ գցեն խռովարարների վրա և արմատախիլ անեն նրանց մէջ թիւրք ժանդարմներին և ոստիկաններին սպանելու ցանկութիւնը: Հայերի մէջ այս առիթով չափազանց մեծ յուզմունք է տիրում: Երկիւղ են կրում, որ նոր թշնամական ցոյցեր տեղի կունենան: Քաղաքում նորից պատում են պահակախմբեր: Հայերին ամբողջ խմբերով աքսորում են Կ. Պոլսից, բայց թէ ուր—անյայտ է մնում»:

—

Հեռագիրները արդէն հաղորդել են եւրոպական լրագիրներին, որ յունիսի 2/3-ին գիշերը երկու հայ կախվեցին Կ. Պոլսում: Այսօր տպագրում ենք մի քանի մանրամասնութիւններ այդ մասին, քաղելով Օդեսայի լրագիրներից: Մեր թղթակիցը այդ դէպքի մասին գրում է մեզ Կ. Պոլսից, յունիսի 5-ից, հետեւեալը. «Երկու զոհերն են՝ չմշկածագցի Թորոսեան Յավսէփ, Կարօ կոչված, և թէքիրդաղցի կօչկակար Յակոբեան Գէորգ, Լեոն կոչված: Երկուսն ալ անհիմն կերպով մեղադրվում են ոստիկան Թալիլը սպանելու գործում»:

—

Ամբողջ վեց ամիս ձգձգելուց յետոյ, սուլթանը վերջապէս համաձայնեց Զէյթունում քրիստոնեայ նահանգապետ նշանակել: Այժմ հարց է ծագում, քանի ամիս պէտք է սպասել, մինչև որ խոստացված քրիստոնեայ նահանգապետը նշանակվի, քանի ամիս պէտք է սպասել, որ նա Կ. Պոլսից Զէյթուն անցնի, և վերջապէս քանի օր նա պէտք է մնայ իր պաշտօնի մէջ...

—

Կ. Պոլսից հեռագրում են «New-York-Herald» լրագրին, թէ այնտեղի դիպլոմատիական շրջաններում կրէտական անկարգութիւնները վերագրում են Անգլիայի ինտրիգներին, որը մտադիր է կրէտական ապստամբութեան միջոցով հասնել այն նպատակին, որին նա չը կարողացաւ հասնել հայոց հարցի միջոցով:

—

Անգլիական պարլամենտում Քրինսիս Ստիվենսոն հարցրեց արտաքին գործերի քարտուղար Կէրզօնին, թէ ինչ է արել անգլիական կառավարութիւնը այն նախագծի վերաբերութեամբ, որով Անգլիան պէտք է առաջարկէր Ֆրանսիային և Իտալիային նոր հիւպատոսարաններ հիմնել Փոքր Ասիայի զանազան կէտերում և մանաւանդ այն տեղերում, ուր եղել են կոտորածներ և բռնի իսլամացումներ: Կէրզօն պատասխանեց, որ նախագիծն արդէն իրագործվում է, Կ. Պոլսի անգլիական դեսպանի առաջարկութեամբ հաստատված են վերջին տարին հիւպատոսներ՝ Վանում, Սիվասում, Ադանայում, Խարբերդում և Մուշում. Դիարբէքիրի փոխ-հիւպատոսի տեղը, որը մինչև այժմ առանց ռոճկի էր, նշանակված է մի օֆիցէր, որին տրվում է որոշ ռոճիկ:

ԱԼԷՊԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

—

«Neue Frei Presse» լրագիրը հաղորդում է, որ ռուսաց և աւստրիական դեսպանները հրահանգ են ստացել ստիպողական կերպով խորհուրդ տալ Բ. Դրան՝ կատարել Ալէպի պայմանագիրը:

Այսպէս կոչված «Ալէպի պայմանագիրը» ըստացել է այդ անունը Կրէտէ կղզու Կանէա քաղաքի մօտ գտնված մի տեղից: Նա կնքվել է 1878 թ. հոկտեմբերի 15-ին մի կողմից Մուխտար փաշայի, և միւս կողմից՝ կրէտական իւնտի անդամների ձեռքով: Մուխտար փաշան ուղարկվել էր Կրէտէ կղզին խաղաղացնելու համար: Նրա ձեռքով կնքված Ալէպի պայմանագրի մէջ կրէտացիների պահանջները հետեւեալ կէտերի մէջ են ձեւակերպված:

1) Ընդունել այն փոփոխութիւնները, որոնք 1876 թ-ին մտցրված են Կրէտէի օրդանական սահմանադրութեան մէջ:

2) Բ. Դուռը կղզու վալի պէտք է նշանակի մի քրիստոնեայ, այն պայմանով, որ նրան հաստատեն եւրոպական մեծ պետութիւնները հինգ տարի ժամանակամիջոցով, ինչպէս և հաստատեն նրա վերընտրութիւնը, եթէ ազգաբնակութեան մեծամասնութիւնը ցանկանայ այդ վերընտրութիւնը:

3) Վալիի օգնականը պէտք է պատկանի այն դաւանութեան, որին պատկանում է նրա կառավարութեան յանձնած դաւառի ազգաբնակութեան մեծ մասը:

4) Բնակիչները իրաւունք պէտք է ունենան դանդաւել դատարանին վարչական կարգադրութիւնների դէմ:

5) Զօրքերը պէտք է մնան միայն ամրոցներում:

6) Կղզու հարկերի կէսը պէտք է մտնի պետական գանձարանը, իսկ միւս կէսը պէտք է գործադրվի կղզու հասարակական շինութիւնների վրա:

7) Պէտք է նշանակվեն հաշտարար դատաւորներ:

8) Բոլոր պաշտօնեաները պարտաւոր են իմանալ յունաց լեզուն:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԲԻԱՅԻ

—

Կ. Պոլիս, յունիսի 1-ին

Կրեատէի գործերը, որոնց մասին առատ մանրամասնութիւններ կը բերեն ձեզ եւրոպական թերթերը, երթալով սուր կերպարանք մը կը ստանան: Թուրք կառավարութիւնը, հակառակ միջազգային դաշնագրութիւններու, թուրք կառավարիչ մը, Ապտուլլահ փաշան, ղրկեց հոն, իբր թէ խաղաղութիւնը վերահաստատելու համար: Այս մարդը ելուզակի մը հմայքն ունի, և կառավարութեան ընտրութիւնը պայծառ ապացոյց մը կուտայ Կրեատէի գործերով շահագրգռուող ժողովուրդներուն, որ Սուլթանին միտքն է բուռն միջոցներով ջախջախել կրեատական շարժումը. ջարդել, հատցնել, Եւրոպայի առջև յայտարարելու համար թէ «ապստամբութիւն մը զսպած է», ճիշդ ինչպէս ըրաւ հայերուն:

Այս վտանգը սակայն շատ լաւ զգացած են օրթոդոքս ցեղերը. հարկաւ իմացաք մակեդոնական նոր շարժումը: «Բումէլիի բարեկարգութիւնները», այդ յատուկ հայկական խնդիրները, որոնք երկարօրէն հրատարակուեցան Պոլսոյ թուրք թերթերուն մէջ, չեն կրցած խաբել մակեդոնական կոմիտէն: Շարժումը սկսած է արդէն Իսկիւպի մէջ, ու պիտի առաջանայ մինչև Էմիրնէ: Միւս կողմէն ստոյգ տեղեկութիւններ հասած են մեզ որ Եպիրոսի յոյներն ալ պատրաստուած են ապստամբական գործողութեան և շատ հաւանական է, որ մինչև նամակս ձեզի հասած օրերը խռովութիւն մըն ալ պայթի այդ կողմերը:

Կ. Պոլսոյ և բոլոր Թիւրքիայի հայերը, տակաւին ենթակայ թրքական արհաւիրքներուն խելայեղիչ ներգործութեան, ընդմտատար թմրութեամբ մը կը դիտեն բաղդակից քրիստոնեայ ցեղերու մէջ յուզուած նոր շարժումները, քաղաքացիութեան ընթացքը և թուրք կառավարութեան վերջին ոգևորումները, քրիստոնեայ ժողովուրդներու արիւնով իր գոյութիւնը պահելու: Հոս զանազան շրջանակներու մէջ կարծիք կայ թէ մօտեցած է ռուսական միջամտութեան մը ժամը. երբ մանաւանդ դէպքերը դահավիժեն, ու թրքական ապիկար իշխանութիւնը անկարող գտնուի ընդհանուր շարժումներով խանգարած կարգը պահելու,—ինչպէս որ ալ է իրօք,—այն ատեն կը կարծուի թէ ալ վերջապէս պիտի շարժի Ռուսիա, Արեւելքի քրիստոնեաներուն պատմական պաշտպանը:

—

Կրեատէի ու մակեդոնական գործերէն դուրս կարեւոր իրողութիւններ կը պակսին առ այժմ. ամեն մարդ անոնց վրա կը խօսի, անոնցմով կը զբաղի: Ելոզ սաստիկ յուզման մէջ է այս դէպքերուն համար. շաբթուան մէջ Նախկին Սատրազամ Սաիդ փաշա երկու անգամ պալատ հրաւիրուեցաւ. կառաջարկեն եպարքոսութեան պաշտօնը, նոր բան մը ըրած ըլլալու համար: Մեր ստացած տեղեկութեան համաձայն Սաիդ բոլորովին մերժած է:—Դանձը բոլորովին դատարկուած է. մակեդոնական և կրեատական խնդիրներէն զատ, որոնք անմիջական գումարներ կը պահանջեն, ի հարկէ, կառավարութիւնը ունի նաև տուգանքի խնդիրներ. շատ դրամ պէտք է վճարելու համար «Բանկօ» շոգենաւին 80,000-ը, Իզմիրի մէջ նորերս սպանուած երեք եւրոպացի երկրաչափներուն մեծագումար տուգանքը, Եալովայի առևանդումին տուգանքը և ուրիշ շատ մը տուգանքներ, հինէն նորէն իրարու վրա դիզուած: Կառավարութիւնը կատարելապէս չըւարած է, նոր հասոյթներ կը փնտռէ. հիմակ Պոլսոյ մէջ խումբ մը մարդիկ ուղեղնին կը չարչրկեն շարունակ նոր հասոյթներու համար ծրագիրներ պատրաստելով. շատ զուարճալի հաւաքածոյ մը կրնայի պատրաստել այդ ծրագիրներէն, որոնք կերեսին ամեն օր տեղական թերթերուն մէջ, եթէ չը վախնայի ձանձրոյթ պատճառելէ:

Եւ այս ամեն տագնապներուն մէջ կառավարութիւնը կը բարեհաճի իր հոգածութենէն չը ձգել հայերը: Վերջին տերօրական գործողութիւններէն ի վեր մանաւանդ ոստիկանութիւնը ձգել հայերը: Վերջին տերօրական գործողութիւններէն ի վեր մանաւանդ ոստիկանութիւնը կատաղի հալածանք մը սկսած է մանաւորապէս հայատանջիներուն դէմ: Բիւրաւոր հայեր կը ձերբակալուին և կաքսորուին, առանց հարցաքննութեան. կաղատին միայն անունք որ 100 բուռլի կամ աւելի կրնան վճարել և այս կերպով կառավարութեան փնտռած նոր հասոյթներու լիառատ աղբիւրներ կըլլան. ընդհանրապէս դրամ վճարողները նորէն կը ձերբակալուին: Բաւական է որ Պոլսոյ քիչ շատ յաճախուած փողոցներուն մէջ ոտքով ժամ մը պտրտիս. կը հանդիպիս միսկին (mesqnin) փոլիսներու, որոնք առջևնին խառնած քանի մը խեղճ հայատանջիներ, պահականոցէ պահականոց կը տանեն մինչև ոստիկանութեան դուռը. ատոնց մէջ ընտանիք ունեցողներ կան և կը ձերբակալուին իրենց արհեստովը կամ առուտուրովը զբաղած ատեններին: Այսօր, մինչև կամուրջին գլուխը, քսան ձերբակալուած հայու հանդիպեցայ:

Այսպէս, առուտուրն ալ դադրած է. ոչ ոք կը համարձակի մէկուն բան մը վստահիլ, որովհետև թերևս ժամ մը եկաը պիտի ձերբակալեն ու աքսորեն այն մարդը, որուն դրամ կամ ապրանք տուած են: Լուսարար Օհաննէսի սպանութենէն ի վեր, բոլոր Թէքիրդաղցիները կաքսորեն, որովհետև ահաբեկիչը, ժանտարմաներէն սպանուած երիտասարդը, Թէքիրտաղցի էր. ան թիւրք ոստիկանութեան գործելու եղանակները: Չը մոռնամ գրել որ մատնիչ Լուսարար Օհաննէս հարուածը ընդունելէն 12 ժամ ետքը սոսկալի տանջանքներով մեռաւ. իսկ ահաբեկիչը ինքզինքը պաշտպանած ատեն ոստիկան մը սպաննեց և մէկ երկուքն ալ վիրաւորեց: Գալով փոլիս Մարգարին, վիճակը շատ ծանրացած է, կըսուի. թրքական հիւանդանոց մը փոխադրուած է:

Անցած անգամ տեղեկութիւններ տուի Եալովայի առևանդումին վրա: Տիգրան Բարաղամեան, աղջկան հայրը և մատամ Պռանդոյի կողմէ մարդիկ գացած են Եալովա բանակցելու գողերուն հետ: Մինչև հիմակ վերջնական բան մը չի կայ սակայն: Սերպիական դեսպանատան առաջին թարգման պ. Թադէոս Թերիան, որ առևանդուած աղջկան մօրեղբայրն է, երբ ոստիկանութեան նախարարին կը ներկայանայ այս առթիւ, Նազրմ հայերուն կը վերագրէ այս առևանդումը և կը պատրաստուի քաղաքական կերպարանք մը տալով խնդրին հալածել աւազակները: Այսպէս յետոյ կիմացուի որ յոյներ և թիւրքեր են խառն: Ինչ որ ալ ըլլայ հետևանքը, Թիւրքիոյ մէջ շատ պարկեշտ մարդիկ պէտք է համարել այդ աւազակները, որոնք չը կրնալով Օսմանեան Պանքայի տնօրէն Սըր Էտկար Վինսընդ մը ըլլալ և կողոպտել դրամական հրապարակը պաշտօնապէս, լեռը ելած են, իրենց կեանքն իսկ վտանգի դընելով գործառնութիւններ ընելու համար:

Պ—ի

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Ղազվին, մայիսի 25-ին

Մայիսի 17-ին քաղաքապետի պատուէրով մունետիկը յայտարարեց հասարակութեան, թէ մայիսի 20-ին, երկուշաբթի օրը, Մուզաֆէրէդդին Շահը պիտի ժամանէ մեր քաղաքը: Այդ օրվանից թէ հայ և թէ մուսուլման հասարակութիւնը անհամբեր սպասում էր իր վեհապետի գալստեանը: Հասաւ ցանկալի օրը. առաւօտից սկսած հասարակութիւնը սկսեց դուրս գալ քաղաքից և տեղ բռնել այն ճանապարհների և փողոցների վրա, որտեղից պիտի անցնէր նորին մեծութիւնը: Արդէն որոշված էր, որ Շահը ներս պիտի մտնէր քաղաքի արեւելեան կողմից՝ Ռաշտի դռնով: Նոյն առաւօտեան մենք, հայերս, պատուէր ստացանք քաղաքապետից՝ դուրս գնալ քաղաքից դուրս և մեծ ճանապարհի վրա տեղ բռնել: Մեզ հետ վերցնելով մի թղթի պարսկական ընտիր շալ, մենք, հայերս, թուով 35 հոգի, դռնից դուրս սպասում էինք նորին մեծութեանը: Պատուիրված էր մեզ մօտ չընդունել և ոչ մի պարսիկ և օրքան կարելի է հեռու կանգնել վերջիններից՝ կարգը չը խանգարելու համար: Ճանապարհի երկու կողմն էլ լցված էր խուռն բազմութեամբ:

Ճիշդ երեկոյեան ժամը 3-ին լսվեց թնդանոթի ձայնը և երեսց առաջընթաց հեծելազօրքը: Զինուորները ճանապարհի երկու կողմում եղած խուժանին ծեծում, հեռացնում էին, իսկ երբ հասան հայերի մօտ, դօրապետներից մէկը գոչեց. «Սրանց (հայերին) մի շարժէք, որտեղ ուզում են՝ թող կանգնեն»: Շուտով երեսց թագաւորական կառքը, որի առջևից քաշում էին հանդուցեալ Նասրէդդին Շահի կառքը՝ դատարկ, որը բերված էր Թէհրանից Մուզաֆէրէդդին Շահի համար: Վերջինս մերժել էր հօր կառքում նստել և հրամայել էր, որ առջևից տանեն: Շահը նստած էր փակ կառքում, երկու կողմից բաց լուսամուտներով: Կառքի երկու կողմից ձիով գնում էին Էյնըլ-դովլէն (որը եկած է Թաւրիզից), քաղաքապետը և թիկնապահներից մի քանի ուրիշները, փոքր ինչ յետոյ գալիս էր զառրին-քամար կոչված թիկնապահ հեծելազօրքը, որը եկել էր Թէհրանից և նոր Շահի առանձին ուշադրութեանն էր արժանացել իր լաւ կազմակերպութեան պատճառով:

Երբ կայսերական կառքը մօտեցաւ հայերի կանգնած տեղին, մենք, հայերս, աւելի առաջ գնացինք: Այդ ժամանակ թիկնապահներից մէկը մօտեցաւ մեզ և հայերի առողջութիւնը հարցրեց թագաւոր-հօր կողմից. նրանից յետոյ եկաւ քաղաքապետը և կրկին հայերի առողջութիւնը

հարցրեց, ընդունեց չալը և տարաւ ներկայացրեց նորին մեծութեան Շահին... Նորին մեծութիւնը ընդունեց և կրկին իր կողմից նուիրեց հայերին: Հայերի մօտից անցնելիս Շահը գլուխը լուսամուտին մօտեցնելով նայում էր հայերիս՝ ուրախ ժպիտը դէմքին:

Ժամը 3 և 15 րոպէին լսեց սալամի թնդանօթի ձայնը և Շահը կառքից իջնելով մտաւ արքունական տունը (պալատիան): Ամսի 20-ի գիշերը չուկան զարդարված էր և լուսավառված, իսկ 21-ին գիշերը պալատում կար հրավառութիւն և թնդանօթաձգութիւն:

Շահը 21-ին մնաց այստեղ, իսկ 22-ին, առաւօտեան ժամը 10-ին մեկնեց մայրաքաղաք: Նրա մեկնելուց քիչ առաջ քաղաքապետից ըստացանք մի նամակ հետեւեալ բովանդակութեամբ. «Նորին մեծութեան Շահին ընծայած ձեր չալը վեհափառն ընդունեց և իր կողմից կրկին նուիրեց ձեզ. պարաք համարեցի յայտնել ի ցնծութիւն ձեզ՝ նորին մեծութեան արած նուէրի առթիւ:»

Շահը նուէրներ է տուել և տեղիս պօստատան-հեռագրատան տեսուչներին, քաղաքապետի օգնականին՝ և մի քանի թագաւորականների: Նուէրներից առաջին տեղն է բռնում այն մատանին, որ կառք նստելու րոպէին նուիրեց քաղաքապետին:

Մենք, հայերս, պարաք ենք զգում առանձին շնորհակալութիւն յայտնելու քաղաքապետ Բաղրխան Սատը-Սալթանին, իր տուած խորհուրդների, արած կարգադրութեան և միշտ դէպի հայերս ցոյց տուած համակրութեան համար:

Բ. Տէր-Սարգսեան

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՍ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ԲՈՒԴԱՊԷՇՏ, 13 յունիսի: Մարգարիտա կղզու վրա ի պատիւ ռուս ժուրնալիստների կայացած հանդիսաւոր ճաշին «Հերոլդ» լրագրի ֆէլիետոնիստը «Hoch» առաջարկեց ի պատիւ երցհերցոգ Եօսիֆի և ցուցահանդիսի վարչութեան: Վասիլեվսկին Պետերբուրգից և Գուրլեանդ Մոսկվայից առաջարկեցին ունգարական հիւրասիրութեան և ունգարական մամուլի կենացները: Դոկտոր Զօբար աղջունեց ռուսներին լատիներէն ճառով, որից յետոյ հիւրերը ձեռքերի վրա բարձրացրին նրան և պատեցրին դահլիճում: Թէ ռուսաց ազգային օրհներգը, թէ Բակօցիի մարշը ընդունվում էին հիացմունքով: Մարգարիտա կղզուց հիւրերը գնացին Եօկայի մօտ, բայց տանը չը գտնելով նրան, թողեցին մի ուղերձ, որ կազմված էր ոգևորված բառերով: Ապա հիւրերը գնացին գեղարուեստական ցուցահանդէսը և երեկոյեան ներկայ էին օպերայի ներկայացմանը:

ԲՈՒԴԱՊԷՇՏ, 13 յունիսի: Ռուս հիւրերը յունիսի 12-ին այցելեցին Եօկային, որի սրտակից ընդունելութիւնը խոր տպաւորութիւն գործեց:

ՎԻԵՆՆԱ, 13 յունիսի: Յունիսի 12-ին կայսրն ընդունեց չերնոգորիական իշխանին:

ԼՕՆԴՕՆ, 13 յունիսի: Համայնքների ժողով: Կէրզօն յայտնում է, որ բացի լրագրական լուրերից, ինքն ոչինչ տեղեկութիւններ չունի Լիխունդ-Զանգին վերագրվող խօսքերի մասին, թէ ռուսաց երկաթուղին պէտք է անցնի Մանչուրիայի վրայով: Նոյնպէս ինքն ոչինչ չէ կարող հաղորդել ճանապարհի պայմանների կամ ուղղութեան մասին: Մօտ դիմեց կառավարութեանը հարցմունքով՝ թէ նա արդեօք տեղեկութիւններ ստացել է այն մասին, որ ռուսները անկանոն կերպով ձեռք են բերել մի հողաբաժին Զիֆուի մօտ, և արդեօք ռուսաց զօրքերի համար են այն ահագին զօրանոցները, որոնք կառուցվում են թերակղզու արևելեան կողմում: Կէրզօն պատասխանում է, որ միակ դէպքը Զիֆուում, որի մասին ինքն տեղեկութիւն ունէր ստացած, այն է, որի մասին արդէն հաղորդված է: Կառավարութիւնը յոյս ունի, որ գործը բաւարար կերպով կը կարգադրվի: Ինչ վերաբերում է ռուսաց զօրանոցներին Զիֆուում, այդ մասին կառավարութեանը ոչինչ յայտնի չէ:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ ԱՆԴՐԷԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Կազանի համալսարանի 4-րդ կուրսի ՄԻ ՈՒՍԱՆՈՂ ցանկանում է դասեր ունենալ չափաւոր գնով: Պատրաստ է և ամարանոց գնալ: Հասցէն. Вера, Ольгинская ул. д. Теріева, Кв. Доктора Кананова. (№ 68) 1—4

ՔԻՄԻԱԿԱՆ ՄԻԶՈՑՆԵՐ
ՐԻՍ-ԳՈՒՏՄԱՆԻ

(Տնային կարիքների համար)

ՊՕԼԻՏՈՒՐԱ «ԿԱՅԾԱԿ»: Մի քանի բօպկում նորոգում է հին, անչնորհ, խազխված կահկարասիքը, պիանինօ, բոյլներ, հայելիի և ուրիշ շրջանակներ, արկղիկներ, տիկներ և այլ յղկած փայտեայ առարկաներ—չը դիմելով ատաղձագործի կամ ողորկողի օգնութեանը: ԳԻՆԸ՝ 1 ր.:

ՏՕԿԱՅԵԱՆ ԲԱԼԶԱՄ—միջոց ոտքի կոշտերից (մօղոլներ), ելունդներից և կաչուէ այլ ուռոյցքներից: «Տօկայեան բալզամը» առողջացնում է ոտի կոշտերը, ելունդները և այլն, ամենակարճ ժամանակում. արմատներով ոչնչացնելով նրանց, նա, սակայն, ցաւ չէ պատճառում: ԳԻՆԸ՝ 60 կ.:

Ծախվում է դեղարարական խանութներում: Գլխաւոր պահեստը Բարձրագոյն հաստատված դեղարարական ապրանքների կովկաս. ընկերութեան մէջ, Թիֆլիս և Բաքու:

(№ 22) 10—50

Լոյս տեսաւ

ՆԻԿՈՂԱՅՈՍ ՏԻԳՐԱՆԵԱՆՑԻ

„BAIATHI SCHIRAZ"

ԲԱՅԱԹԻ-ՇԻՐԱԶ

Երրորդ աշխատութիւն

Ծախվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ՝ Սուզանաճեանի, Լանկոյի և Ֆարինայի մագազիններում:

ԳԻՆԸ 60 ԿՈՊ.

Յիշեալ մագազիններում գտնվում են նոյն հեղինակի

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԳԵՐ և ՊԱՐԵՐ, գործ I. 80 կ.
«ԲԱՅԱԹԻ-ՔԻԻՐԴ» » գործ II. 60 կ.

(№ 69) 1—5

ՄՕՍԿՎԱ ԵԿՈՂՆԵՐԻ
ՀԱՄԱՐ

քաղաքի կենտրոնում, Բոլշայա Դմիտրովկա (Большая Дмитровка) փողոցի վրա տրվում են

„ՎԵՐՍԱԼ"

Շքեղ կերպով կահաւորված ՀԱՄԱՐՆԵՐ: Բնակվողների համար կան ամեն տեսակ յարմարութիւններ՝ ՏԵԼԵՖՕՆ, ՎԱՆՆԱ: ստացվում են ՀԱՅՈՑ և ՌՈՒՍԱՑ լրագիրներ և այլն: ԳՆԵՐԸ ՉԱՓԱՒՈՐ ԵՆ:

7—20 (№ 62) Բ. ԱՒԵՏԻՍԵԱՆՑ



ՔԻՄԻԱԿԱՆ ՄԻԶՈՑՆԵՐ
ՐԻՍ-ԳՈՒՏՄԱՆԻ

(Տնային գործածութեան համար)

ՍՄԲԱԿԱՅԻՆ ՁԷԹ, սմբակները պնդացնելու, կակղացնելու և սեացնելու համար: Նա պահպանում է սմբակները ճաքճքելուց և նպաստում է նրանց կանոնաւոր աճման: ԳԻՆԸ՝ 60 կ. և 1 ր.:

ԿԱՇՈՒԻ ՕԾԱՆԵԼԻՔ, կակղացնում է ամեն տեսակ կաշի, պահպանում է նրան խոնաւութիւնից և բորբոսումից, չնում է նրան անթափանցելի և ճկուն. այս օծանելիքը անփոխարինելի է որսորդական և ուրիշ կօշիկների, շտիբլէտների, սանձերի, ձիի սարքի, չէմօդանների և ուրիշ կաշուէ առարկաների համար: ԳԻՆԸ՝ 75 կօպ.:

ԹԱՄԲԱՅԻՆ ՍԱՊՕՆ (յատկապէս սպիտակ կաշուց չինած թամբերի համար): Գործ է ածվում մեծ աջողութեամբ ամեն տեսակ սպիտակ և զանազան գոյների կաշի մաքրելու: ԳԻՆԸ՝ 1 ր. 25 կ.:

Ծախվում է դեղարարական և կաշեղէն ապրանքների խանութներում:

Գլխաւոր պահեստը Բարձրագոյն հաստատված՝ դեղատան ապրանքների Կովկասեան ընկերութեան մէջ, Թիֆլիս և Բաքու:

(№ 22) 11—50

Թարգմանում եմ

Է. ԴԻԼԼՕՆԻ

„ԴՈՐԾԵՐԻ ԴՐՈՒԹԻՒՆԸ ԹԻՒՐԲԱՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ" գրուածքը:

Ե. Թ.

(№ 68) 2—2

ԵՐԵՒԱՆԻ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՀԱՄԱՐ

Հարկաւոր են՝ հայոց և ռուսաց լեզուների, հայոց և ռուսաց պատմութեան, Հայաստանի, Ռուսաստանի և ընդհանուր աշխարհագրութեան, հայոց մատենագրութեան, թուաբանութեան, բնական գիտութիւնների և պատրաստական դասարաններում աւանդվող առարկաների ուսուցիչներ:

Դիմել Երեան հետեւեալ հասցէով.—Попечителю Арм. Дух. Семинаріи присяжному повѣренному Григорію Христофоровичу Теръ-Хачатурову.

(№ 68) 2—3 Տեսուչ Տ. Յովհաննիսեան

ԹԻՖԼԻՍ-ԿԱՐՍԻ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ

չինութեան աշխատութիւնների ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ յայտնում է, որ այս 1896 թվի յուլիսի 5-ին, ժամը 12-ին, նրա ընակարանում, որ գտնվում է Թիֆլիսում, Բարիչէվսկի փողոցում, տուն № 26, նշանակված է մրցում՝ եղեւեայ գերանների մատակարարութեան. այդ գերանները, որոնք հարկաւոր են սալայատակելու համար, պէտք է լինեն զանազան մեծութիւնների և ընդամենը 19,400 խորանարդ ֆուտ:

Այդ մատակարարութեան տէխնիկական պայմանները և կոնդիցիաները կարելի է տեսնել ՎԱՐՁՈՒԹԵԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱԺՆՈՒՄ առաւօտեան 9 ժամից մինչև 12 ժամը, ամեն օր, բացի տօն օրերից. նրանք կարող են ուղարկվել ըստ ցանկութեան և պօստով: Յայտարարութիւնները պէտք է տրվեն անձամբ կամ ուղարկվեն պօստով, կնքված ծրարներով՝ Թիֆլիս-Կարսի երկաթուղու շինութեան աշխատութիւնների վարչութեան ճիշդ հասցէով, և ունենան այս մակագիրը՝ «къ конкуренціи на поставку мостовыхъ брусьевъ»: Յայտարարութիւնների մէջ պէտք է ճիշդ նշանակված լինեն—նիւթի քանակութիւնը, մատակարարութեան ժամանակամիջոցը և տեղը, դինը՝ թէ վագոնների մէջ լցնելու վարձի հետ միասին, թէ առանց դրան:

Յայտարարութիւնները ներկայացնելիս վարչութեան դրամարկղի մէջ պէտք է նախապէս մտցնվի գրաւական՝ մատակարարութեան արժէքի 5%-ի քանակութեամբ. իսկ մատակարարութեան չափի համեմատ յետ կը պահվի ամեն մի վճարումից 10% վերջնական գրաւականի համար, մինչև որ կը կազմվի գրաւականի ընդհանուր գումարը, որը կազմում է ամբողջ մատակարարութեան արժէքի 10%-ը:

(№ 67) 3—3

Այս օրերս լոյս տեսաւ և վաճառվում է

„ПОЛОЖЕНІЕ АРМЯНЪ ВЪ ТУРЦІИ"
ДО ВМѢШАТЕЛЬСТВА ДЕРЖАВЪ ВЪ 1895 Г.

ՆՈՐ ԳՐՔԻ 2-ՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Պարունակում է՝ Դլադստօնի ճառը, յօդուածներ՝ ԲՕԼԷՆ-ԺԱԿԱՄԷՆԻ, ՄԱԿԿՕԼԻ, ԳՐԻՆԻ ԴԻԼԼՕՆԻ, ԴԻԷՎԻ և ուրիշների:

Աստաջարան պրոֆէսօր Լ. Ա. Կոմարովսկու

ՄԱՏԹԷՈՍ ՊԱՏՐԻԱՐՔ ԻԶՄԻՐԼԵԱՆԻ և Է. ԴԻԼԼՕՆԻ պատկերներով: Երես 443+XXVIII

ԳԻՆՆ Է 1 ՐՈՒԲԼԻ

Պահեստը՝ МОСКВА: въ книжный магазинъ Н. П. Карбасникова, Моховая, д, Нееловой. (№ 61) 6—10

ՕԾԻՏԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՂՋԿԵՐԱՆՑ ՀԱՄԱՐ

ՀԻՄՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄԱԳԼՈՒԽՆ է 23,000,000 բուբլի:
Ընկերութեան տոկոսաբեր թղթերը պահվում են պետական բանկում:

Ծնողներին, խնամատարներին և առհասարակ այն անձանց, որոնք ցանկանում են ապահովացնել աղջկանց ապագան, „ՐՕՍՍԻԱ" ընկերութիւնը առաջարկում է ՕԾԻՏԻ (բաժին) ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ:

Օրինակ, եթէ ցանկանում են երկու ամեայ աղջկայ համար ապահովացնել 5000 ՐՈՒԲԼԻ ՕԾԻՏ, այնպէս որ, 18 ՏԱՐԵԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԻՆ ստանան այդ գումարը, (այսինքն 16 տարուց յետոյ), այն ժամանակ այդ տեսակ ապահովագրութեան համար ապահովագրողը „Ռօսսիա" ընկերութեանը պիտի վճարի ամեն 3 ամսից յետոյ 52 բուբլի:

Սոյնանման ապահովագրութիւններ կարելի է կայացնել նաև այն պայմանով, որ ապահովագրողին անմիջապէս վերադարձվին բոլոր իր վճարած տուրքերը (պրէմիաները,) եթէ միայն ապահովագրված երեխան վախճանվի պայմանաւորեալ ժամանակից առաջ:

1895 թվի յունվարի 1-ին „ՐՕՍՍԻԱ" ընկերութեան մէջ ապահովագրված էին 31,701 անձինք 83,708,760 բուբլի դրամագլխով:

Տղայ ԵՐԵԽԱՆԵՐԻ համար ևս կարելի է ապահովացնել դրամագլուխ նոյն կերպով, ինչպէս աղջկանց, և այդ դրամագլուխը կը ստացվի իբրև թոշակ (պէնսիա) ԿՐԹՈՒԹԻՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ համար, եթէ միայն ապահովագրած երեխան կապրի մինչ պայմանաւորեալ ժամանակամիջոցը:

Ապահովագրութեան մասին յայտարարութիւններն ընդունվում են և ամեն տեսակ տեղեկութիւններ հաղորդվում են վարչութեանը Ս. Պետերբուրգում (Большая Морская, սեփական տուն, № 37), Կովկասեան շրջանի համար ընկերութեան վարչութեան մէջ, որ գտնվում է՝

ԹԻՖԼԻՍՈՒՄ, Սերգիեվսկայա փ. տ. № 6. (երկրորդ յարկում) և բոլոր գործակալութիւններում կայսրութեան բոլոր քաղաքներում:

(№ 71) (2.) 25—52

Дозволено цензурою, Тифлисъ, 14 Іюня 1896 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.